ՀՀ Արագածոտնի մարզպետ Աշոտ Սիմոնյանի շնորհավորական ուղերձը Երիտասարդության միջազգային օրվա կապակցությամբ

Սիրելի՛ երիտասարդներ, շնորհավորում եմ ձեզ Երիտասարդների միջազգային օրվա կապակցությամբ:

1999 թ. դեկտեմբերի 17-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի որոշմամբ օգոստոսի 12-ը հռչակվել է Երիտասարդության միջազգային օր: Ի թիվս աշխարհի առաջավոր երկրների, Հայաստանի Հանրապետությունում տոնը նշվում է մեծագույն սիրով, ապագայի հանդեպ հավատով ու լավատեսությամբ:

Հայոց պատմության բոլոր ժամանակներում հայ երիտասարդությունը իր ներուժն ու գիտելիքները մշտապես օգտագործել է՝ ի շահ երկրի զարգացման եւ հզորացման: Սիրելի՛ երիտասարդներ, մեր երկրի ապագայի հիմնաքարը դուք եք՝ ազգային ու համամարդկային արժեքներին ձեր նվիրվածությամբ, համարձակ գաղափարներով ու նախաձեռնողականությամբ, վճռականությամբ ու նպատակասլացությամբ:

Ձեր երիտասարդական ավյունով, անսպառ եռանդով ու կարողություններով, ցանկացած մարտահրավերների դիմակայելու ձեր պատրաստակամությամբ դուք շարունակում եք մնալ մեր երկրի առաջընթացի եւ զարգացման ամենակարեւոր օղակներից մեկը: Այսօր դուք ամենուր եք եւ վճռորոշ մասնակցություն եք ցուցաբերում կառավարության ամենաբարձր ատյաններում, անվտանգության ու խաղաղության ապահովման գործում, հասարակական հարթակներում եւ քաղաքական գործընթացներում:

Եւս մեկ անգամ շնորհավորելով Երիտասարդների միջազգային օրվա կապակցությամբ՝ մաղթում եմ ձեզ երջանկություն, բարեկեցություն, վստահություն սեփական ուժերի նկատմամբ, նորանոր ձեռքբերումներ եւ հաղթանակներ: